11 *գորի ոսկերչին մեղաց . . . :*

12 *առաջի Ա̅յ և Ա̅Ծ հն . . . ; [ող]-*

13 *որմի:*

Ծանոթություն.-- *1. Արձանագրության աջակողմյան մասը մնացել է որմնայան տակին:*

2. Քաշ տողադարձերի կետերը երբեմն սխալ է դրել և երբեմն էլ բառերը խմբագրել է:

3. Արձանագրության պահպանված մասից երևում է, որ նա նվիրատվական է եղել, հավանաբար Գրիգոր ոսկերիչն իր տված նվերի դիմաց (նվերի անունը չկա) ստացել է Գրիգոր լուսավորչի տոնը բոլոր եկեղեցիներում:

9. Ամենափրկչի ներսում, տեղահան վիճակում գտնվող խաչքարի ճակատին

(Լուս. № 27)

Նկ. 27. Արձ. № 9:

ԺԲ դար

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Տ̅ր նշան տէրունակա[ն] . . . Սարգսի*

2 *լեր աւգնական, յահեղ աւուրն անդրաւական:*

Ծանոթություն.— *Առաջին տողում բաց մնացած երկու գրերը պետք է վերականգնել Տ̅Ր, որովհետև, ամենայն հավանականությամբ, նույն Տ̅Ր Սարգսին է պատկանում № 163 արձանագրությունը, որ դարձյալ մի այլ խաչքարի ճակատին է փորագրված:*

10. Մի խաչքարի թիկունքին, որ այժմ արել են ամենափրկիչ եկեղեցու ավագ խորանի վեմքար

(Լուս. № 27բ)